

ՊԱՏՈՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԲԻՖՈՐԱԳԻՑ ԴՐԱՑՆԵ

Ի Պատրիա ։ Սեպտ ։ յուն ։ թի. 5

ՏԱՐԵՐՔ

# ԳԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՒ ՏԱՐԻԱ ՈՒՍՏՎԱՐԻ ՆԻՒԹ

Ա Հ Ի Ա Տ Ա Խ Ե Ա Յ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ—ՂԵՒԱՆԴԵԱՆՑ

ՀԱՅՈՒ Ա.


ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

մարդ գետար ջլիև ստ քհմի լու անշնդր

ՓՈՐԱԿՐՈ ՊԱՐԱՔԱՅ

ՏՈՎԱԿԻ ՎԵՐ Ե Վ Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա

Կ. Պալիս, Սալտան Համբակ, Ազրի ըն. Տակ



809.198.1(075)

124

սահ. 99(075)

ՏԱՐԵՐՔ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻԱՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԻՒԹ

Ա 35255

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ—ՂԵՒՌՆԴԵԱՆՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ




ՓՈՐԱԳՐԻՉ ՄԵՐՎԻՇԵՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՄՈԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Պոլիս Առևլան Համամ, Աղբիւրին Տու

1894





## ՅԱՌԱԶԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

— • —

Մայրենի լեզուի քերականութեան « Տարերքը » երեք դրաբյեներէ պիտի բազկանայ որք պիտի բովանդակեն երկրորդ, երրորդ և չորրորդ տարիներու ուսանելիքը : Ներկայ հրատարակութիւնը երկրորդ տարւոյ ուսանելիքը կը պառանաիէ :

Կար ժամանակ մը յորում քերականութիւնը ուսման եւ գիտութեան վերջակէտն էր նկատուած, երբ նա համարուած էր մի արուեստ, այլ գժուարին եւ մի միայն ընտրելոց ու մանց մերձենալի արուեստ, բայց այդ՝ ժամանակաւ էր. այժմ գիտակցական ուսումն ապացուցած է որ կարգալ - զրելը ինքնին ոչ այլ ինչ է. եթէ ոչ քերականական նախապատրաստութիւն : Այսպիսով տարրական քերականութիւնը, մեր կարծենք, քերականի (այր-բենարանի) հարազատ եղացը կը հանդիսանայ, եւ ես կարծեմ թէ մեր նախնիք, երեւի, մերձաւոր կապ մը գտած են քերականի եւ քերականութեան մէջ, որ երկուքին ալ համարեա՛ մի եւ նոյն անունը տուեր են : Իսկ ինչ որ մեր նախնիք մեզմէ տասնեւհինգ դար յառաջ հասկցեր են, մեզ ներելի չէ այժմ չը հասկնալ :

Եթէ արդարեւ քերականութեան պաշտօնն այն է որ քերականի միջնորդութեամբ հաղորդուած լեզուագիտական տարրական զիտելիքները փոքր առ փոքր՝ աստիճանաբար կոկէ, լրացնէ, կարգաւորէ եւ վերջապէս ամբողջացնելով ընդհանուր համակարգութեան մը վերածէ, ապա պէտք է ենթազրել որ քերականութեան ուսումն իսկապէս կ'ակսի տառածանօթութեան հետ նոյն իսկ առաջին տարիէն . ուրեմն այն քերականական գործնական վարժութիւններն ալ զորս մենք առաջարկած ենք իրեւ երկրորդ տարւոյ ուսանելիք, կանխահաս կամ անդործազրելի չը պիտի համարուին երբէք :

Համեմատաց ուստի պահանջ որ մեր յարթեածն այս  
անշատ խնամքու քերականութիւնը ոչ չէ այն ձեւով ինչ  
էն ոչ որ զայտ կ'ընդունեն մեր քերականամոլները , այդ  
ընդունելու թեառն նախապատճեն է մրայն :

Այս առաջարկած նիսթերը գործնական վարժութիւն-  
ներ են . կանոնակարգ չ'անմիտ քերականական անուանակր-  
չութիւններ են . որ զայտով է՝ զրաւոր վարժութեանց  
ընդունելու անց առաջանակ է :

Այս առաջարկած նիսթեր առարուան մը համար է , այս-  
պիսի երկարություն առարուան համար : Դրաիս ցանկին նայելով ,  
շատ զիշտն է բայց . ողբեր շուրջ է ոյ մենաշեն ու ու-  
սուցած աշխատն է . ողբեր շնորհելի յեւ դուռը դուռը՝ բն-  
հանութեանը :

Այսինքն շուրջ է այս ամենը մելի տարուոյ համար .

Անուշ կ'ըսնելոք որ երբ վարժապետը չափազանց կը ծան-  
րացնեն զայտովեարդ . զայտ կը զործէ . բայց նոյնպէս վաս-  
կը զործէ երբ երկարութեամբ՝ իւր ժամանակին չաւան-  
ցեր մանելուց այս ամենը ինչ որ կարելի էր աւանդել : Մենք  
կը հաստատենք որ մեր առաջարկածը ամբողջապէս եւ ամե-  
նայն զիշտ քութեամբ կարելի է մասակարարել երկրորդ  
տարուան շնորհազիշն մէջ : Ո՞յ տարաքէն սորս մուծազոյն  
մասու ուշակերտեամբ անմիտ արդէն առաջին տարիին թէեւ  
ի հարել կցիսառ ու եւ ամենազ :

Այսինքն բարո՞քն է .

Կը պատասխանակնէք որ բոլորն է , համարեա բոլորը ինչ  
որ երկրորդ տարին կարելի է աւանդել . առարկայ , որպի-  
սութիւնն եւ զործազութիւնն առարկայի , որպիսութեան եւ  
զործազութեան մեռնոր թիւր . բառ , վանկ , տառ . ուզ-  
զազրութեան զիշտուոր եւ զժուարին կանոնները զործնա-  
կանարկն , եւ պարզ նախազատութեան համառօտ պատկե-  
րը : Անու բոլորը ինչ որ մենք աւանդել որոշած ենք :

Այսինքն բնորելի ձեւով զասաւորուած են զիտե-  
լիքները .

Ձեւի մասին բան չենք պրոցեր . մենք ներկայ ձեւը յար-  
մարագոյն դատեցինք : Ծով բարեխորդ ուսուցիչները , ա-  
ռանց մանրամասնութիւններն արհամարհելու , զիտակցա-  
բար եւ խղճի մաօք՝ ի գործ զնեն բոլոր վարժութիւնները  
եւ պիտի տեսնեն որ իւրեանց աշակերտները տարւոյն վերջը  
զործնականապէս ծանօթացած են լեզուին առրական  
ամենակարեւոր զիտելեաց հետ եւ որ մեծն է՝ ուզգազրու-  
թեան եւ զիտակից ընթերցանութեան մէջ զգալի առաջա-  
զիմութիւններ բրած են :

Քանի մը նկատողութիւններ եւ

Խնչպէս վերը զիտել տուինք , այս զիտքը իրը երկրորդ  
տարւոյ ուսուցման նիւթ նշանակուած է եւ խտապէս մեր  
«Մայրենի Լեզուի» երկրորդ զրքին երրորդ հասուածի  
պաշտօնը պիտի կատարէ , բայց աւելի մանրամասն , աւելի  
կանոնաւոր եւ մշակուած ձեւով : Հետեւարար , զրքոյկիս  
րուս տեսնելէն յետոյ՝ «Մայրենի Լեզուի» երկրորդ տարւոյ  
երրորդ հասուածը բնքն իրեն անպէտ եւ ոչինչ բան մը կը  
դառնայ :

Գրքիս երկրորդ մասը որ է երրորդ տարւոյ դասրնթա-  
ցը , կ'ամփափէ իւր մէջ քերականութեան առաջին մասը զոր  
բառ սովորութեան ՀԱՅՈՒՆԻԿԱՆ կ'անուանեն , խակ տար-  
րական ուսումնաբանի չորրորդ տարւոյ ուսումնելիքը՝ մեր  
զրքոյկի երրորդ մասը կը կազմէ որ է քերականութեան ՀԱ-  
ՅՈՒՆԻԿԱՆ մասը : Գրքիս երկրորդ եւ երրորդ մասերը կը  
պատրաստուին եւ հետզհետէ կը առազպանին :

Ընթերցողը պիտի տեսնէ որ մենք քերականական եւ լեզ-  
ուարանական կանոնները բացատրելու համար երկու միջոց  
ի գործ դրած ենք . նախ զրած ենք օրինակները եւ այդ օ-  
րինակներէն հետեւցուցած եմք կանոնները . երկրորդ՝ կա-  
նոններն առանդելէ վերջը՝ մէն մի կանոնի համար բազմա-  
թիւ հրահանգներ տուած ենք , զորս զործազրելով կանոն-

Ներք նվազագույնը պահանջմանը ուստինացաց յիշաց դժունակ մէջ :

Կունակացաց թուանամարները զողբնմաց մէ ևս պայման ոչ պահանջմանը ևս չփոխուին , կամ առաջարկութեալ առելի նաև ևս շահեց թուանչաններով ցոյց առ պահանջմանը . պին կունակացաց թուանամարներն առելի շահեց ևս ևս թուանամարներուն :

Եթէ առանցքակ կունակացաց մէջ ջանացինք բառ կարի առանցքից չ . . . . . և . . . տառերու ողպազրութիւնը . ի կողմէ զարդելու մասն մէ որ առանց պակասութեան չ' կայուց պինք : Առաջարկութեալ մէր յարգելիք ուսուցացաց որ ուսուցացաց մէր առաջարկութեալ հրանանդներէն՝ պատրիքներ առանցքացաց որ յունոց բնութանուր առարանդներուն մէջ չ . . . և առանցքակ զարդարուն այրբենական աղիսանիք պահանջման : Այդ աղիսանիք չմերէ յետոյ ուսուցիչը ովտաք է նույն որ եթէ ազդ տառերուն զրուած ո եւ է բառ հանցանցք առանցքացաց որ մէր տառած հրանանդաց մէջ իշխան չ բնայ . նորու ուղիոց յիներն տառագերէ յետոյ , առելցրներ յունոց պինք աղիսանիքն միոյ : Մենք կարծենք որ այդպիսի պինքուն առնենք շատ չեն կրնար պատահիլ . այսու առնենքնեւ : Եթէ մէր ուսուցիչները ցվիրչ տարւոյ իրենց առ ելցուցակ բառերու աղիսանիք չնորն ընեն մեզ ուղարկել . մեծառքու կիր պարտաւորեն զմեզ : Մարդ մը , որքան ոյ աշխատի , խնամեալ զործիքներ չտնենալով իւր ձեռքը . չ' կարող բառ ամենանի կատարեալ եւ պակասութենի զերծ զորք մը յառաջ թերել : Ֆոզ մեր արգելիք ուսուցիչները վախճանել այսովիս նոր ձեռնարկութեան մէջ թիւրութիւններ պարագար . բարեհանին իրենց խոնեմ զիտուզութիւններով նորասանել մեզ . եթէ կ'ուզեն աղպային զասախարակութեան պատերու ձառայութիւն մը մասուցնել :

Մետքու ևս հշմորդու քննազասութիւնէ ոչ միայն չենք խորին ոչ նույն շատ բառ կ'ամփսկալներ :

Ա. Ա. Ա. Բ Կ Ա. Յ

Մ-ը բառ հինգ ուրուցին շիուրուն+ անչ՝ ուսունելիչ+, լեկիչ+,  
հոգուրելիչ+, ք-լովիելիչ+ և լուսիելիչ+.

Ա. Դասատան մէջ մենք կը տեսնենք՝ աշակերտ,  
վարժապետ, սեղան, աթոռ, նստարաններ, դրասե-  
զաններ, գրասախտակ, քարեւտախտակ, լուսամուտ-  
ներ, գուռ . . .

Տան մէջ կարող ենք տեսնել՝ հայր, մայր, քոյր,  
եղբայր, սենեակներ . խակ սենեակներու մէջ . . .

Ե. Անձրեւ գալու ժամանակը կը լսենք՝ որոսում,  
քամիներու շնչիւն, մանչիւն, եկեղեցւոյ մէջ՝ գոպիր-  
ներու . երդեցողութիւն, քահանացներու ընթերցա-  
նութիւն, զանգակի հնչիւն, զօղանչիւն, գաշտի վրայ՝  
սոխակի գայլացյիկ, թռչուններու ճռուողիւն, արօ-  
տատեղիներու վրայ . . . անտառի մէջ . . . լեռներու  
վրայ . . . փողոցներու մէջ . . .

Գ. Ճաշակելով մենք կարող ենք ճանաչել ազր,  
շաքարը, գինին, քացախը, ջուրը, թեյը, սուրճը,  
կաթը, մածունը . . .

Դ. Հոստաելով կը ճանաչենք՝ վարդը՝ մեխակը,  
ուեհաներ, շուշաներ, մանուշակը, խոնկը, կնդրուկը . . .

Ե. Շօշափելով կը ճանաչենք՝ զնդակը, բամբակը,  
փետուրը, բուրդը, ձիւնը, հացը . . .

Զ. Հինգ զգացարանիքներու միջնորդու-  
թեամբ ճանաչուած բաւրե կը կոչուին ուսուցիւ-  
թակերտ, հայր, քոյր, երդ, շաքար, բամ-  
բակ, վարդ են . առարկոյ են .

վարդապետներ ։ ի՞նչ առարկայներ կը տեսնենք եւ կեղեցւոյ մէջ, գաւափի վրայ, անտառի մէջ, փողոցի մէջ, գետի մօտ, արտերու մէջ և գոմերու մէջ :

ի՞նչ առարկայներ կը շնորին փայտէ, երկաթէ, կաւէ, պղնձէ, ապակիէ :

ի՞նչ առարկայներ կ'ուտենք, ի՞նչ կը խմենք, ի՞նչ կը հագումնք : — (Բերանացի) :

2. Կան առ արկայներ, որոնք մի քանի մասերէ բաղկացած են :

2. Արունեք են սեղանի, լուսամուտի, ծառի, կռի, հասի մասերն ։ ի՞նչ մասեր ունի գլուխը, իրանը, ռաները : — (Բերանացի) :

3. Մարդս առ արկայներուն զատ զատ անուններ կուտայ . իւրաքանչիւր առ արկայ իւր անունն ունի : Առ արկայի մասերն ես զատ զատ անուններ ունին :

Մարդս ոյն ժամանակ առ արկային անոնք կուտայ, երբ խոր տեսածի և հաշում մասին ուրիշներուն բան մը ուզէ բաել :

Առաջան կը տեսնենք և կը զննենք մեր հինգ զզ այսարաներներուի, խոկ հառաչ չենք կուրող տեսնել և զննել . միայն կը լսենք զայն և կը հասկնանք : Առ արկայներուն անուններն մեր տեսպատճեանիք մեան ենթարկելու համար կը գրենք զայն, այսինքն տառերով կը նշանենք :

3. Վերոցիշեալ երկու վարժութեանց պատասխանները գրաւոր ներկայացուցէք՝ առաջ ամբողջ ա-

ուարկայներու անունները գրեցէք, յետոյ անոնց մասերուն անունները :

**ԵՆՉԱՒԱՐ ԵՒ ԱՆՇՈՒՆԵԶ ԱՌԱՋԿԱՑՆԵՐ**

**Ա.** Աշխար, շուն, կռոտու, ձի, հաւ, կով, գումէջ, աշակերտ, քահանաց :

**Բ.** Մեղան, քար, աթոռ, վայտ, կերակուր, այշի, գիրք, եկեղեցի :

**Կ.** Առաջին տողին վրայ նշանակուած բառ երն՝ կենդանի առ արկայներու անուններն են, որը հերթիւ ուշաբնիւ իւրեանց ազատ կամքով դորա չեւու առ արկայներ են:

Երկրորդ տողին վրայ նշանակուած բառները աչհարտ առ արկայներու անուններն են, որը իւրեանց ազատ կամքով չեն կարող տեսափոխութիւ. գորա ձևաւ առ արկայներ են :

**Հ.** Ի՞նչ շնչաւոր առարկայներ կրտեսնեք տան մէջ, բակի մէջ, գոմի մէջ, անտառի մէջ :

**Ի՞նչ** անշունչ առարկայներ կը տեսնեք դասաւան մէջ, պարտէզի մէջ, այգիի մէջ, դաշտի վրայ, ուսումնարանի և եկեղեցւոյ մէջ : — (Բերանացի) :

**Տ.** Հետեւեալ բառերէն զատեցէք և գրեցէք նախ շնչաւոր առարկայներու անուններն, յետոյ անշունչներունք : — Կացին, գիւղացի, աղօց, դարրին, հովիտ, մուրճ, աղախին, նիզ, բանալի, ծառայ, ազաւնի, խող, հաւ, բայն, գամ, այգի, այգեպան, հաց, հացթուխ, սրահ, գոմ, ձի, կով, եղ, ոչխար, օրօրոց, մանուկ, անկողին, մահճակալ, զգեստ, գեր-

ձակ , առեղ , կօշկակար , կօշիկ , սիսեռ , կաղամք , համեմ , կարմրախայտ , լոր , մեղր , մեղու , ճանճ , ծառ , բղէզ , խոտ , հնձող , մանդաղ , ձեռք , ոտք , աչք , այծ , սաղ , բաղ , եղջիւր , եղջերու , աղուէս , միս , պանիր , աքաղաղ , նապաստակ :

6. Հետեւեալ օրինակներուն մէջէն զատելով գրեցէք նոխ անշունչ առարկայներու անունները , յետոց շընչ առորներունը : — Գայլը՝ կը կերակրեն խոր ատամները , խոկ բաղէն՝ կտուցն ու մազինները : Զին կը պաշտպանուի տմբակներով , գոմէցը՝ եղջիւրներով , շոնը՝ ատամներով , կատուն՝ ճանկերով , մեղուն խայթոցով :

Հառը խօսեցաւ . օրը բացուեցաւ , արեւն ալ շատոնց ելաւ բարձրացաւ : Խելօք մանուկներ , շուտ շուտ հագուեցէք , շուտով գտաստան մէջ դուք հաւաքուեցէք : Մարդ և անաստն , գաղան և թռչոն , ամենքն ալ խրեանց գործին կը փութան : Մըջիւնը բերնով կերակուր կը տանի , մեղուն կը ծծէ անուշ հիմք ծաղկէն : Դաշտը գոյնզզոյն ծաղիկներով զարդարուած , մարդերը կանաչ զգեստներ հագած , անտառը ձմեռուան քնէն արթնցած՝ խոր տերեւները կը շարժէ մեղմիկ :

Զինորմները իրենց ուռկանները կը ձգեն , հնձողներն իրենց մանդաղները կը շարժեն : Դուք եւս մանուկներ առէք ձեր զիրքեր , Աստուած ծուլոթիւն երրէք չ'սիրեր :

### ՄՏԱԼԻՈՐ ԵՒ ՆԻՒԹԱԿԱԾՆ ԱՌԱՐԿԱՅԵՐՆԵՐ

Ա . Հոգի , հրեշտակ , Աստուած , ապրուստ , եռանդ , աշխայժ , աշխատանք :

Ը. Արօր, սեղան, աքաղաղ, մարդ, բաժակ, աւիւր, կաքաւ, կաղամի :

Տ. Առաջին կարգին մէջ նշանակուած առ արկայները լժեւ և կան և անուն ունին, բայց մեր հինգ զզ այսարանիքներունենիմ ակայ չեն. զայն մեր միայն Հունական կայութեալ կայութեալ կայութեալ է իր ճանաչենք և կը լուծրունենք. Գորտ Հունակայութեալ առ արկայներ են :

Երկրորդ կարգին մէջ նշանակուածներն՝ շնչաւոր և անշաւնչ առ արկայներ են. զայն կը ճանաչնանք մեր հինգ զզ այսարանիքներու միջնորդ ու լժեամբ. Գորտ կը կոչուին նաև Հունակայութեալ առ արկայներ, որովհեած որ և իցենիւ լժե կազմուած են :

7. Հետեւեալ խօսքերուն մէջէն զատեցէք մտաւոր առ արկայները նիւթականներէն, նիւթականներն ալ երկու խումբի բաժնեցէք — շնչաւոր և անշաւնչ :

Առառած ստեղծեց մարդը և տուաւ անոր միտք, զզ ացմաւնք և կամք, որպէսզի կարենայ իւր սեպհական խելքովը իրեն համար ապրուաս ճարել. Մարդ հնարեց արօրը, վարեց երկիրը, սերմեր ցանեց, կացին հնարեց և վառելու համար փայտ կարեց, սանձ ու թամբ հնարեց և իրմէ աւելի ուժեղ կենդանիները հնազանդեցուց, միտք բանեցուց և շատ անասուններ, գործիներ ու կազմածքներ ունեցաւ. — Բարի մարդը իւր կարողութեան չափով աղքատին՝ փող, ծարաւիին՝ ջուր, քաղցածին՝ հաց և մերկին՝ զզեստ կուտայ. Աստուծոյ հրեշտակը կ'օգնէ բարի մարդուն (Բերանացի. դրաւոր) :

ԱՅԱՀԱՅՈՒՅԻՆ, ԹԻՒԻՆ

Ա. Հայ, քար, ծառ, պատ, ճրադ, աղ, մաղ,  
կացին, մեղմն, աշակերտ, կերակուր, եկեղեցի,  
քահանաց, մասանի :

Բ. Հայ-Շ, քարեր, ծառեր, պատեր, ճրադներ,  
աղեր, մաղեր :

Եացին-Շ, մեղմներ, աշակերտներ, կերակուր-  
ներ, եկեղեցներ, քահանայներ, մասանիներ :

Ծ. Այս առջին բառ տողերուն մէջ եղած բառ  
ու երեն իւ բարանչիւ ըր մէյմել առ արկացի  
անուն է — մի հայ, մի քար, մի կացին, մի  
եկեղեցի :

Կրկրորդ երկու տողերուն մէջ գանու ած  
բառերեն իւ բարանչիւ ըր առ և միատեսակ  
առ արկացի անուն է — շատ հացեր, շատ քա-  
րեր, շատ կացիններ, շատ եկեղեցիներ :

Ե, և Ն, մասնիկները բառերուն ծայրը  
ու ելցիներով՝ առ արկացին մէկեն աւ ելի լի-  
նելը ցոյց կու տան :

Ց. Հետեւեալ խօսքերէն մէկ առարկայ ցոյց տուող  
անունը զատեցեք շատ ցոյց տուողներէն : Հայրս շու-  
կայ զնաց և զնեց միս, հացեր, հաւեր, բադ և  
հնդկանաւեր : Աշակերտները կաւիճ զնեցին և գրաշ  
տախտակի վրայ գասերնին գրեցին : Գիւղացիք ալ-  
տերը վարեցին : Քահանայները եկեղեցւոյ մէջ ժա-  
միւրզութիւն կատարեցին : Դաշտին վրայ կ'արածուէին

կովեր , եղներ , այծեր , ոչխարներ և ուրիշ շատ կնճ-  
դանիներ : Դարրինը կը շինէ կացին , բա՛ն , խոփ , ման-  
դաղ , ուրագ և ուրիշ բաներ : Զուլուկը շող դոր-  
ծեց , բրուտը՝ շինեց կուժեր , սրուակներ , դառմի-  
ներ : Հաւը ձու կ'ածէ , կովը կաթ կուտաց , աշ-  
կերաը զնեց գիրք , մատիտ , կանոն , գրիշ . կար-  
մար : Հայկը պայտասակ ունի : Արամը կարիքն շոնի :  
Բոլոր աշակերտները կանոններ ունին : Աշակերտնե-  
րէն և ոչ մեկը տողաշար ունի :

(Բերանացի . գրաւոր) :

9. Բոլոր զատուած առարկայները փոփոխեց .  
մէկը շատի վերածեցէք , շատը մէկի—հետեւեալ կոր-  
դաւ . հայրս—հայրերնիս , շուկայ—շուկացնեք . հայ—  
հացեր ելն :

### Ա.Ռ.Ա.ՐԿԱՑԻ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. կարմիր խնձոր , սպիտակ շաքար . թթու քա-  
ցախ , սեւ թանաք , կապոյտ ծաղիկ :

Բ. Ասկի մատանի , քարաշէն եկեղեցի , արարակն  
ձի , հիւսիսային եղջերու , առաւօտեան հով :

7. Առաջին և երկրորդ տողերուն մէջ  
նշանակուած բառերը՝ կարմիր , սպիտակ ,  
արարական , հիւսիսային . . . ոչ առ արկայ-  
ներու և ոչ նոյցա մասերու անուններն են .  
նորա դրուած են առարկայներու համար  
և կը ցուցնեն անոնց ուսունական կամ ուսու-  
նակ :

8. Մարդու իւր զգ այսրանքներու միջնոր-

դութեամբ ոչ միայն առարկայները կը ձաւնաշէ, այլ և նոցա որդիւննաւ (այսինքն թէ առարկայն չնշէ) :

Որպիսութիւնն ալ առարկայի պէս իւրաքանչ ունի :

40. Հետեւեալ օրինակներուն մէջէն զատեցէք նախ և առաջ առարկայներու, յետոյ նոցա որպիսութեանց անունները : — Սեւ կուպր, կարմիր գինի, կանաչ խոտ, պայծառ արեւ, փայլուն աստղ, կապոյտ երկնակամար, փայտեայ կլոր գաւաթ, անտառային թթու խնձոր, դաշտացին խորամանգ աղուէս, փոքրիկ երկչոր նապաստակ, թունաւոր սեւ օձ, եղջերաւոր խոչոր անտառն, հարաւային տաք քամի, հիւսիսային ասոնարեր փոթորիկ, պողպատէ սուրմանգաղ, քարայտառակ լայն ուղի, ծուռ նեղ շափո, հին խոր ջրհոր, տերեւեաշատ խիտ անտառ, քառակուսի վայելուչ սեղան, բրդէ վասփուկ գուլսայ, արծաթէ վայլուն գըստ, պարսկական թանկադին գորդ :

41. Որպիսութիւն ցուցնող անուններու տակը դիմ քաշեցէք . — պայծառ երկնակամարի վրայ գորշագոյն ասիզեր երեւցան : Ամազերը թանձրացան և սեւ քօղով ծածկեցին կապոյտ երկինքը : Երեկոյին կենաստառ անձրեւը ջրեց ծարաւի երկիրը : Դաշտային թառամած բայսերը զուարթացան . նոքա իրենց բարսկ արմաններով թաց հողին մէջէն ծծեցին սննդարար հիւթը : Ցորենի և գարիփի արտերը իրենց քատակի հասկերու նիհար հատիկները լեցուցին կշտացուցին :

42. Հետեւեալ առարկայներուն քով գրէք իրենց պատշաճ որպիսութեանց անունները : — Ամազ, գունտ,

շուն , թիթեռ , խնձոր , ջուր , կապիկ , ապակի , քամի , զրիչ , անիւ , խուրձ , խոտ , արեւ , ոսկի , արձալթ , ածուխ , քար , բամբակ , հաց :

9. Միևնոյն առարկայն կարող է նուե քանի մը որպիսութիւնն ունենալ : — Կառաւ , Դեւեւեւեւ . բայց ճիւլ , ճիւլ , առուելուցու ուռենի :

13. Խնչպիսի\* յատկութիւններ կարող են ունենալ հետեւեալ առարկայները՝ ճանապարհ , տուն , գարուն , ամառ , աշուն , ձմեռ , ջուր , շաքար , ապակի : — (Բերանացի և դրաւոր) :

Ի՞նչ յատկութիւններ կարող է ունենալ մարդու : — (Բերանացի և դրաւոր) :

10. Քանի մը առարկայններ կարող են միևնոյն որպիսութիւնն ունենալ . — Ըստու գոյլ , Ըստու աղուես , Ըստու մարդ , Ըստու գործ : Բոյն , բոյն , ծառ , բոյն մարդ , բոյն արժ անաւորութիւն :

14. Հետեւեալ որպիսութիւնները ի՞նչ առարկայներու կարելի է յատկացնել : — Կարմիր , սպիտակ , սեւ , կանաչ , կապոյտ , քաղցր , դառն , սուր , պինդ , փափուկ , կլոր , հիւթալի , թափանցիկ , ծանր , թեթեւ , մաքուր : — (Բերանացի . դրաւոր) :

15. Ի՞նչ առարկայններու կարելի չէ յատկացնել հետեւեալ յատկութիւնները . — Փխրուն , դիւրավառ , դիւրաբեկ , հոտաւետ , ցամաք , կոկ , եռանկիւնի , տափակ , բարի , օգտակար : — (Բերանացի . դրաւոր) :

16. Խնչպիսի\* որպիսութիւններ կարելի չէ յատկացնել հետեւեալ առարկայններուն . — արեւ , ածուխ ,

գայլ , նուզուսուակ , կրակ , քար , շաքար , փետուր ,  
ազուլու , օձ : — (Բերանացի և դրաւոր) :

17. Հետեւեալ առարկայներէն խրաքանչիւրը  
ի՞նչ յատկութիւն անպատճառ պիտք է ունենայ .  
սոխոր , սխաւորը , արծաթը , սովին , պղինձը , շուշմնը ,  
մանուշակը , զանգակը , գետի ջուրը , ծովու ջուրը ,  
բամբակը , արճիճը , մեղրը , քացախը : — (Բերանացի ,  
ապա դրաւոր) :

18. Ի՞նչ առարկայներ գիտեք , որոնք միշտ հե-  
տեւեալ յատկաթիւններն ունին . ուժեղ , վնասա-  
կար , օգատակար , ամուր , կակուդ , հոտուետ , գիւ-  
րաբեկ , գիւրախար , անուշ , դառն , կարմիր , սպի-  
տակ , հասանուատ : — (Բերանացի . դրաւոր) :

19. Գրեցե՛ք այնպիսի որպիսութիւններ ,  
զորս կը ճանաչենք՝ տեսանելիքի , լսելիքի , ճաշակե-  
լիքի , հաստացելիքի և շօշափելիքի միջնորդութեամբ :

20. Անուանեցե՛ք այնպիսի որպիսութիւններ ,  
որոնք կը ցուցնեն առարկային դպյուր , ձեւը , նիւթը ,  
ո՛ր անցուց և ո՛ր ժամանակի լինելը : — (Բերանացի) :

21. Արագիսութիւն ցուցնող բառերու տակը գիծ  
քաշեցե՛ք : — Անձրեւային աշուն , աշնանային անձրեւ  
Փոթորկայի ծով , ծովային փոթորիկ : Դաշտային ծա-  
ղիկ , ծաղկաւետ դաշտ : Անձրեւու ամսու , ամարա-  
յին անձրեւ : Մարդկային արժանաւորութիւն , ար-  
ժանաւոր մարդ : Եւնդ անական բնութիւն , բանական  
կենդանի :

22. Արագիսութեամբ նոցելով՝ ճանչցե՛ք առար-  
կայները : — Հեղուկ , հոսանուատ , թափանցիկ , ան-  
համբ : Կրոր , ամուր , սպիտակ , երկնքէն վար իյնող :  
Կրրակ , գեղին , աշխարհի սիրելին : Գեղեցիկ , անու-  
շահուատ , ձեռք ծակուզ : Կրոր , կարմիրաթշիկ , քաղցրա-

Համբ . Պողպատէ , սուր , շողչողուն և կարեւոր + կանաչ յինած , կարմիր գործած , սեւ կտրած \* ) .  
Գարնան գաշտի մէջ տեսաց մի ծաղիկ ,  
կանաչ թերթիկ ունէր և կապոյտ աշուիկ ,  
Խոտերու մէջ հազիւ նա կը տեսնուէր ,  
Համեստ կերպարանք սիրուն հոս ունէր .


*Արգիստիթելլեն թիկը*

Ա . կարմիր խնձորներ , երկար կանոններ , սպիտակ թղթեր , կանաչ յուլունքներ , գիւղացի մարդիկ , գաշտացին բնակիչներ :  
Ե . կարմիր-ները , երկարները , սպիտակները , կանաչները , գիւղացիները , գաշտացինները :

11. Որպիսութիւնցուցնող բառերը թիւ չ'ունին եթէ առարկայի մօտ դրուած են .  
բայց եթէ առ անձին են , կրնան առարկայներու անուան պէս եւ աւ եւ + մասնիկները  
իբրեւ վերջաւորութիւն առնուլ՝ և շատի համար գործածուիլ :

23. Հետեւեալ օրինակներու մէջ գտէք առանձին  
գործածուած որպիսութիւն ցուցնող բառերը և տակերը զիծ քաշեցէք : — Հայրս գնեց զեզեցիկ դրիչներ . անոնց մէջէն փոքրները ես առի , իսկ մեծերը  
քրոջս տուի : Մայրս մեզի համար թարմ խմորեցէններ եփեց . ինձ տուաւ մեծը , իսկ եղրօրս փոքրը .  
Հիւանդները կը նախանձին առողջներուն : Հարուստ-

\* ) Առշ , սեւ — մոր :



Ներք պարագանց են ողջել աղքատներուն : Դիտուն  
ներք աղքատներուն կուսուցանեն : Օրէնքը կը պատժէ  
շաբճ բը : Գրիւռաւ կը ներէր մեզաւորներուն , կը բժիշկ-  
ներ կապին բը . կոյցին բը . անդամարդները , բորոտները  
և գիւահարդները : Աստուած կը խնամէ որբերը : Կազն  
ու կոյցը սրբիթաց առաւակէ մը պիտի անցնէին :  
Վարչական մէջ եւ կը սիրեմ կարմիրները : Քաղաքա-  
ցիները թէնէ . շատ անդամ կը ծաղրեն գիւղացիները ,  
բայց եթէ գիւղացիները չլինէին , հաւատա՛ , քաղա-  
ցիները սփաման՝ կը կորնէին :

ԱՅԱԽԱՐԱՅՈՒՆ ԴԱՄԴՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Եռներ կը հաջէ . Եռներ փախաւ : Եռներ կը խած-  
նէ անցորդք : — Թռչունը կը թռչի . թռչունը կը խա-  
զայ . թռչունը կ'երգէ . բայն կը շինէ , ձագ կը հանէ ,  
ձագերը կը կերպակը : մժեղներ կը բռնէ :

12. Հ-ԵՐ Հ-ԵՐ Ե-ԵՐ Ե-ԵՐ Ե-ԵՐ Ե-ԵՐ Ե-ԵՐ Ե-ԵՐ  
ներու անուններ են ի ո՛չ սրպիտութեան .  
նորու միայն կը ցուցնեն թէ առ արկայն ի՞նչ  
կ'ընէ , ի՞նչ կը գործէ : Դորա հոգալուն ցոյց ,  
առ ող բառ եր են :

Առ արկայի գործողութիւնն ալ մարդս  
կը ճանաչէ խոր հիմու զգ սյարանիքներու  
միջնորդութեամբ :

13. Գործողութիւնն ալ սրպիտութեան  
ովէ ս առ անց առ արկայի կարող չէ լինել :  
Որպիտութիւնը կը ցուցնէ թէ առ արկայն

ի՞նչպէս է , իսկ զործազու թիւնը — թէ նու  
չնչէնք :

14. Ինչպէս որ առ արկայներն և իրենց  
որոշուու թիւնները , այնպէս ալ առ արկայ-  
ներու զործազու թիւնները զատ զատ բա-  
ռերով կը նշանակենք :

24. Հետեւեալ խօսքերու մէջ գտէք զործազու-  
թիւն ցոյց տուող բառերը և անոնց տակը զիծ քա-  
շեցէք : — Արսորդն սպաննեց գայլ մը : Գայլը բգքաները  
էր հովուին ոչխարները : Կարապետը առաւոտները  
կ'ելնէ , զգեստները կը հազնի , երեսը կը լուանայ .  
աղօթք կ'ընէ և առաւոտեան հացը կ'ուտէ ու դաշտ  
կ'երթայ : Փոքրիկ տղայները ուսումնարան կ'երթան :  
Զին բեռ կը կրէ : Օձը կը սոզայ : Չուկը կը լոզայ :  
Թռչունը կը թռչի : Արծիւը կը սրանայ օդին մէջ : Գե-  
տը կը հոսի : Քամին կը չնչէ : Ամսը կ'որոտայ :

25. Գտէ՛ք առարկայի անունը , որովհանթեան ա-  
նունը և զործազութիւն ցոյց տուող բառը :

Լուսին , լուսին ծագեր է ,  
Գիշերահարսն ելեր է ,  
Կապոյտ ամսպեր հագեր է ,  
Ճերմակ քողեր ձգեր է .  
Եկէք քուրիկ պար բռնենք ,  
Չքնարդ լուսնին դէմ կայթենք :

Անձրե՛ւ , անձրե՛ւ ցած արի ,  
Բացո՛ւր ցորեն ու զարի ,  
Բացո՛ւր ծաղիկ , կանաչ խօս ,  
Արրէ՛ փոշին , մաքրէ՛ օդ :

26. Հետեւեալ բառերէն իւրաքանչիւրին մօս  
աւելցուցէք մի յարմար զործողութիւն : — Գար-  
ըին . . . հնձող . . . ուսուցիչ . . . դերձակ . . . խո-  
հարար . . . ձկնորս . . . հիւմն . . . որմնագիր . . .  
ներկարար . . . տակառագործ . . . բրուտ . . . որ-  
սորդ . . . քահանաց . . . վաճառական . . .

27. Արտագրեցէ՛ք նախ զործողութիւն ցոյց տուող  
բառերը , յետոյ առարկայներու անունները : — Գիւ-  
ղացին կը մաքրէ վարելահողը , կը փարէ օրսավարը , կը  
սերմանէ և Աստուծմէ կը խնդրէ որ ժամանակին տայ  
արեւ , անձրեւ և օրհնեէ իւր վաստակը : Գիւղացին  
կ'երթայ պարտէղ , հողը կը մշակէ , մարդերը կը յար-  
դարէ , բանջարներ կը ցանէ և պարտէզին շուրջը ցան-  
կով կը պատէ , որպէս զի անասունները ներս չ'մտնեն ,  
չ'փնտցնեն և ոտնակոխ չ'ընեն իւր աշխատանքը : Գիւ-  
ղացին ուրիշ շատ բաներ ալ կը շինէ , շատ զործեր  
կը զործէ :

28. Ե՞նչ կ'ընէ զիւղացին ամառը , աշնան , ձմեռը , գարնան . . .

29. Իւրաքանչիւր առարկայի մօս զրէք իւր յար-  
մար զործողութիւնը և աւելցուցէք թէ առարկայն  
ի՞նչ բան կը շինէ և մնո՞վ : — Հացագործը հացը կը  
պատրաստէ արիւրէ : — Քոյլս կը կարէ շապիկներ  
քիմանէ : Դարրինը կը շինէ պայտեր . . . կօշկակարը . . .  
պղնձագործը . . . ոսկերիչը . . . նկարիչը . . . խո-  
հարարը . . . ջրադաշտանը . . . դերձակը . . . հիւմնը . . .  
շուրջակը . . . որմնագիրը . . . ճարտարագետը . . .  
հնձողը . . . ձկնորսը . . .

30. Մէ առարկայ կարող է քանի մը  
տարրեր զործողութիւններ կատարել :

Գիւղացին չեղած մանդաղը , ուստի գաշտը և  
ձիու համար խոտ այլու Մանուկիները շահքան  
իրենց զբքերը , չորեքոյն պայտասակի մեջ և  
բացին վարժարան :

30. Հետեւեալ առարկայներէն իւրաքանչիւրին  
տուէք քանի մը յարմար գործողութիւններ : — Զին,  
կովը , ոչխարը , հաւը , աքազաղը , կատուն , շունը ,  
դայլը , աղուաւը , ծիծեռնակը , սոխակը , կկուն ,  
մեղուն , խողը , աղաւնին , գորաը , բաղը , թռչունը ,  
ձռկը , օձը , մարդը . . . . — (Բերանացի , գրաւոր) :

31. Ի՞նչ գործողութիւններ կը կատարենք ձեռն-  
ներով , ոտներով , քթով , ականջներով , բերանով . . . —  
(Գրաւոր) :

16. Մի և նոյն գործողութիւնը կրնայ  
զանայան առարկայներու միջոցաւ կատար-  
ուիլ : — Զու կը և սու , գորար և սու . բաղը  
և սու , մարդն ալ և սու :

32. Ի՞նչ առարկայներու կարող ենք յատկացնել  
հետեւեալ գործողութեանց իւրաքանչիւրը : — Եցս  
կուտայ (ճրազը լոյս կուտայ , կրակը լոյս կուտայ ,  
լուսինը լոյս կուտայ , աստղերը լոյս կուտան , արեւը  
լոյս կուտայ) : Կ'արթննայ , կը թռչի , կը բառաչէ ,  
կը մայէ , կը հանգչի , կ'ոռնայ , կ'որոտայ , գուրս կ'ել-  
նէ , մայրը կը մտնէ , կը վառի , վար կ'ինայ , կը փայ-  
մի , կը ծաղկի , կ'աճի , կը մեռնի :

33. Հետեւեալ բառերէն որո՞նք ցոյց կուտան ա-  
ռարկայ , գործողութիւն և որպիսութիւն : — Մշակ ,  
մշակել , մշակող , մշակութիւն , կոտրեցի , կոտրած ,

կառը : Փշանք , փշուն , կը փշեր + կերտկուր , կե-  
րող , կերած , կերեր եմ : Կը գրեմ , զիրք , դրութիւն ,  
գրիչ , գրող + Բմպելիք , խմեցի + Խելք , խելօք + Խաղ ,  
խաղալ , խաղանէր , խաղալիք + Մամել , ծամելիք +  
Կար , կարած , կարող , կարկասան , կարեց + Հնձել ,  
հունձձ , հնձող + Զայն , ձայնաւոր , ձայնել , անձայն +  
ձանապարհ , ճանապարհորդ , ճանապարհորդութիւն  
Մանուկ , մանկական , մանկանալ + Յիշասամկ , յիշել ,  
յիշող , յիշատակարան : Յիշողութիւն , յիշեցի , յիշ-  
եալ : Ներել , ներողամիտ , ներողութիւն + Ենորհ ,  
չնորհել , չնորհած , չնորհաւորող + Զար , չարանալ ,  
չարութիւն , չարչարանք , չարչարուիլ + Առք , որոց ,  
որել : Աւժ , ուժեղ , ուժեղանալ :

Յէ . Կօշկակարը մեծ մեծ կօշիկներ կը կարէ : Դեր-  
ձամկը ձեւեց գեղեցիկ բանկոնակ : Բարի քահանայն  
օրհնեց աշխատասէր տղան : Գեղեցիկ զիւղ + Գիւղա-  
կան փոքրիկ պարզ եկեղեցի : Եկեղեցական զգ եւստ  
Գիմասիրա մարգն օգնեց անանկին : Մարգկային գու-  
թը կը շարժի՝ թշուառը տեսնելով : Բարի հոգի ունի  
մեր դրացին : Մեր դրացւոյն հոգեկան բարութենէն  
մարդիկ օդուտ կը քաղեն : Զգալի ծանրութիւն :  
Մանր զգացմանք : Օրինաւոր պաշտօն : Պաշտօնական  
օրէնք :

Թիկ . ԳԱՐԵՒՐՈՂԱՐԵՒՐԵԱՆ,

Ա . Ես կ'ընթեռնում : Դու զրեցիր Հնձողը Հնձեց :  
Բ . Մենք կ'ընթեռնուն-+ , Դուք զրեցի-+ , Հնձող-  
ները Հնձեց-ք :

17 . Առ աջին տողի մեջ զործ կատարող

առարկայները մեկ—մեկ են, նոցա կատարած գործողութիւննե ալ մեկ է—ոչ ոքուր է չուրուր։ Երկրորդ ասղի մեջ գործողները շատ են. նոցա կատարած գործողութիւններն ալ շատ են—ունէ ոչ ոքուր է չուրուր։

Գործողութիւննե ալ առարկայի և որպարփառ խեան պէս կարաղ է մեկ և շատ զոյց տալ։ Գործողութիւններ շատցնելու համար՝ վերջու որու խեռներ վրայ կ'աւելցնենք ու տառ երբ միայն կամ ուրիշ տառ երբու հետ։

35. Հետեւեալ օրինակները փոփոխեցէք այնպէս որ առարկայներն ու գործողութիւնները մէկէն աւելի ցոյց տան։ — Աշակերտը կ'ընթեռնուն իւր դասը։ (Աշակերտները կ'ընթեռնուն իրենց դասերը)։ Կովը կ'արածի դաշտին մէջ։ Թռչունը կ'երգէ իւր քաղցրահնչիւններգը։ Արմեադիրը կը շնէ պատը։ Վարժապետը ստվեցուց աշակերտին։ Աշակերտը լսեց վարժապետին ըստածը։ Քահանայն մկրտեց մանուկը։ Մանուկը մեծցաւ, ուժովցաւ և իւր հօր օգնող եղաւ։ Ամառն ես գիւղ կ'երթամ, աշնան կրկին կը վերագառնամ։ Դարնան ծառը կը ծաղկի, ամառը պտուզը կը մեծնայ, իսկ աշնան զայն կը քաղեմ, մի մասը կ'ուտեմ, իսկ միւս մասը կը պահեմ։ Զմեռը դիւզացին գործը կը պակսի, բայց նա պարապ չ'մնար։ Դիւզացին պարապ մնալ չ'սիրեր։

36. Հետեւեալ օրինակներու մէջ բոլոր առարկայները ու անոնց գործողութիւնները այնպէս փոփոխեցէք որ մէկը շատի վերածուի, և շատը մէկի։ —

Հայոց կը թիվն առաջապելինները կամ հացիւ խները :  
(Հայոց կը թիվն առաջապելիններ են) : Հայոց կը թիվն խները :  
Ետքը՝ այս թիվն է : Երեւան կամ կը պատրաստի :  
Ավելիքը շորենն է կազմականի մէջ : Յորենք հաս-  
կերու մէջ կը համար արտերու մէջ : Գիւղացինները  
պաշտու կը մշակեն : Խորա կը հերկեն հազր : կը ցերուն,  
յետոյ այդ ցերուն մէջ ցորենք կամ որիշ հացա-  
հասկինները կը մերժանեն : իսկ Աստուած կ'աճեցնէ  
զայտու : Աստուած կ'աշարել ամսար : Չերմանթիւնը ,  
անձրեւ և գոյցուն արեւ :

18. ՄԵՐ ԱՍՔՐԱՋ ՀԱՅԻՒՆ ՈԲԱՆԴՐ ԱՌ ԱՐ-  
ԼԱՅԻ ԱՌԱՆ ՆԵՐ : ԱԲ ԱՌԵՐԸ ՈՐՈՂԻՄ ԽԵԿԱՆ,  
ԽԱԿ ԱՌԱՆԴՐ Վ ԱՐԾ ԱՂՈ ԽԵԿԱՆ : ԲԱՅԻՒՆ ԱՌ ՎԵՎԱ-  
ԽԵՎ :

37. Հետեւ այ խոսքերը վերաւծեցէք և բաէք  
իրացանչիք բառի նշանակութիւնը : Փայրուն արե-  
ւ մայրը մասու : (Փայրուն կը ցացնէ արեւուն որպի-  
սութիւնը) : արեւը անցունց և նիւթական առարկայի-  
ստունց է : մայրը մասու : կը ցացնէ արեւուն վ արծա-  
զութիւնը) : Լուսինն այ արդ էն զնաց ծածկուեցաւ :  
Փայրուն առաջերը առնիք առկ մասան : Բարեպաշտ  
մարդիկ և կեցեցի զնացին : Մայ մասուն կները առանք  
մասունքն : Ավագանունը աշակերտնները վ ասերնին կը  
առաջին : Ազուս բարեւը կը բառաս արէ բանի մէջ վ բա-  
նուաց և թշիքը : Պայծառ ասազերը կը փայլին պարզ  
երթիք պայու : Աեւ աւս ամսպերը ծածկուեցին երկնից  
երթուր : Գիշերը միջնաց : Վայրենի վ ականնները ար-  
թիքացն : Չար մարդիկ կը սիրեն խաւար վիշերը :

38. Չառեցէք և կարգաւ զրեցէք նախ առար-

կայլ անունք , յետոյ որսիստիթեան և ասքա գործու-  
զուխ եամեր . Ցնացած բառերը բաց թօղոցէք .  
Ոիրո՞ն , անմեղ խմ՝ զառնուկ , բորդդ սպիտակ ու  
փափակ .  
Վ. զերով զաշտ ու արօտ , մօրդ բայցես զու կարսու-  
ի լոր , զառնուկ սիրական , փոքրիկ ազտ զու նման ,  
կուզոյ մոցրդ՝ հետր շատ կը բերէ քեզ անուշ կամք .

Աւոհնի՛ սիրո՞ն , աւոհնի՛ զարոր ,  
Խնչո՞ւ զու այսօր արախ չես ժօղոփր .  
Միթէ՞ քեզ սաստիկ արեւ ազորէ ,  
Արեւ ազորէ և անձրեւ բախէ .  
Արմատիդ քամին սառ ջուր չի՞ վազեր .  
Եամեր ես տեսաց որք սուր ի ձեռին ,  
Աւոհն կարեցին , կեանքքէն զրկեցին .  
Զայն առշարջեցին , սաստիկ քերթեցին  
Եւ իրենց համար թիեր շնուցին ,  
Նառակ կազմեցին , մէջը նառեցան ,  
Մէջը նառեցան , սուն վերադարձան ,  
Եւ զիս ալ , փոքրիկս , հետերնին տարին .

Կը Ձառնաբէն . — Ե՞նչ կը ցուցնեն բառերը . (Բառե-  
րը կը ցուցնեն առարկայ , որսիստիթիւն և գործու-  
զութիւնն) . Ե՞նչ բանի առարկայ կ'ըսենք . Ցնացիսի՞  
առարկայներ զիտենք . Արո՞նք են շնաւոր և որո՞նք  
անշաւնչ առարկայներ . Արո՞նք են նիւթական և ու-  
րո՞նք մնասոր առարկայներ . Առարկայի անունը շատ  
ցուցնելու համար ի՞նչ փոփոխութիւն պէտք է կը ել  
տալ . որքմն որո՞նք են շատցնելու նշանները . Արսի-  
սութիւնը ցուցնող բառերը ինչո՞ւ . կը զբանին . որսի-  
սութիւնը առանց առարկայի կարո՞ղ է լինել . որսի-

առ թեամն անունը՝ շատը ցոյց տուած ժամանակը ի՞նչ  
առողջ է պատճեաց : Անցո՞ւ համար կը դրուին գործու-  
ղութիւն ցոյց տուող բառերը Դործողութիւնն առանց  
առարկացի կարո՞ղ է լինել : Դործողութիւններ՝ շատը  
ցոյց առար համար , ի՞նչ փափախութիւններ կը կրէ :  
Մի է նո՞յն է արդեօք առարկաց և առարկացին ցուցնող  
բառը , որպիսութիւնն և որպիսութիւններ ցոյց տուող  
բառը , գործողութիւնն ու գործողութիւններ ցոյց տուող  
բառը : Ի՞նչ կը կազմուի բառերէն :

Բ. Ո. Ո. Ե. Ի. Վ. Ո. Ն. Ի.

19. Առ արկայինն , նորա որպիսութեամներ  
և գործողութեամներ մարդու առանձին ա-  
ռանձին անուններ կու տայ : Առ արկայի ,  
գործողութեամն և որպիսութեամն անունն-  
երը կը կրչուին է---:

Բ. Առ առ անունն է վարենք կու : — Յորենը հասեր է : Հա-  
սած ցորենը կը հեծեն մանգաղով : Հնձած ցորենը կա-  
լերու մեջ կը կասեն : Յորենը կը կասեն կամերով :

Ա . Հաց , ծառ , քար , ջուր , ցուրու , սեւ , լու ,  
մուր , միս , չեկ , զալ , տալ :

Բ . Բաժակ , դարի , ցորեն , բարակ , հասակ , սի-  
րուն , սպիտակ :

Կ . Բարեկամ , աշակերտ , աշխատել , աշխատու-  
թիւն , աշխատասիրութիւն :

20. Առ աջին տաղի մեջ նշանակու ած  
բառերը միանող ամուվ կը կարդ ացուին , երկ-

բորդ տողի մեջ նշանակու ածները Երկու անգ ամսով, խոկ երրորդ տողիներ Երեք և առելի անգ ամսով։

Բառ ին այն մասը որ միանդ ամսով կ'արտասահաւ ի՞չ չոչ կը կոչուի։

39. Հետեւեալ խօսքերը աեւորակի մեջ օրինակեցէք՝ բառերը վանկերու բաժնելով։

Գիրք, մեջը քաղցր միրգ։ Ավ կը կարուց, նա մարդ կ'ըլլաց, Ավ կը խաղաց, նա կը կարուց։ Ավ կ'աշխատի, նա կ'ուտէ, Խմացողին մին, չ'խմացողին հազար։ Ազ ու հաց, սկսոր բաց։ Հաց ու պանիր, կեր ու բանէ, Հացի կարածք՝ թուրը չի կարեր։

Քարեւտախտակը, քարեղբիշը, թանաքամանը, կանոնիք՝ դասական սուարկայներ են։ Գլուխս կը բարեցին, սրտիկո հանեցին, գինի խմցոցին, լեզու բացուեցաւ, խօսիլ սկսաւ։ Քանի որ ծեծը կ'աւտէր, որախութեամբ կը պարաւէր, երբոր ծեծը վերջացաւ։ Բնիս գետին ու մեռաւ։

21. Վանեկերու թու ին նայելով՝ բառերը կը լինին միավանդ, Երկավանդ և բազմավանդ։

40. Կարդ առ զբեցէք նախ միավանդ, յետոց երկավանդ և ապա բազմավանդ բառերը։ Ծառ, կաղնի, լորենի, կեռասինի, բնկուղենի, թուզ, թզենի, թութ, թթենի, սալոր, սերկեւիլ, խաղող, նուշ, ձի, դարի, դարուն, Գարեղին, դաւազան, հիւանդ, բժիշկ, բարեկամոթիւն, զիրք, զրասուն, զրավաճառ, հաց, հացադ ործ, զաթոց, գութան, առ

րոր , արօստ , հօտ , հովիտ , ճախարակ , ճօճանակ ,  
ճակնդեղ , մազ , ծամ , ծամող , պարանոց , պարտիղ-  
պան , այգեպան , աղաւնի , աղաւնեվաճառ , ծիս ,  
լոր , կաքառ :

ՀԵՐԻԿԵՆ ԵՒ ՏԱՌ

22. Ամեն բառ՝ մի կամ մի քանի վանե-  
կերէ շինուած է , իսկ ամեն վանեկ՝ մի կամ  
մի քանի ռազմակեր:

23. Գրելու ժամանակ Հնչիւններու  
տեղ առանձին նշաններ կը դործածենք  
որոնք ու կամ չեն կը կոչուին :

24. Կան տառեր , որոնք Հեշտիւ կ'ար-  
տասանուին և միայնակ , առանց ուրիշ տառ-  
ուերու օգնութեան , պարզ կը Հնչուին .  
բայց կան և այնպիսի տառեր որոնք միայ-  
նակ զգուար կը Հնչուին , և միայն զիւ-  
րաւ Հնչուող տառերու օգնութեամբ  
կ'արտասանուին :

Հեշտիւ Հնչուող տառերն են՝ ա , ե , է , ի ,  
ը , ո , օ , ու : Սորտ կը կոչուին յայտն տառեր :

Դժուար Հնչուող տառերն են՝ բ , զ , դ ,  
դ , թ , ժ , թ , ն , չ , պ , ջ , ա , չ , ա , մ , յ , ն , շ ,  
շ , պ , ջ , ո , ո , փ , ա , ր , ց , ւ , փ , ք , ֆ : Սորտ  
բայց կը կոչուին :

Բաղաձայն տառերը հեշտիւ հնչելու համար անոնց մօտ կը դնենք և տառը՝ բը, գը....

25. Առանց ձայնաւոր տառի վանկչի լինիր Բառի մեջ քանի ձայնաւոր որ լինի, այնիքան ալ վանկ կ'ունենայ նա ։ Առանց բաղաձայն տառի վանկ չէ կարող լինել ։

26. Գրելու ժամանակ՝ բառի մի մասը մեկ տողեն միւս տողը անցրնելու համար, պէտք է ամբողջ վանկ կամ վանկեր անցրնել ։ Եթէ բառի մեջ մի քանի բաղաձայն տառեր միմեանց մօտ գտնուին՝ տողադարձի մեջ պէտք է մացնել և տառը ։

44. Հետեւեալ ստանաւորին բառերը վանկերու բաժնած գրեցէք՝ տողադարձի կանոնին համաձայն ։

Փոքրիկ մի գտնուկ ձեւան նման սպիտակ ։

Խըր մօր հետ մի օր գնաց դաշտն արածուիլ ։

Եւայնտեղ սկսաւ ժայռ ու քարի տակ

Անվախ համարձակ խաղալ ու վազել ։

Անխոհեմ գառնուկ՝ դար վեր, դար ու վար,

Քար, փայտ չէր նայեր, անհոգ կընթանար ։

Որդեա՛կ իմ, հանդա՛րտ, մայրը կը ձայներ,

Ըզդոյշ կաց որդեա՛կ, բայց նա չէր բեր,

Գառնուկին անդադար խաղալով թռչէր

Դար վեր, դար ու վար միշտ կը վազվակէր ։

Գառնուկին մօր ձայնին երբ ականչ չդրաւ,

Խըր յիմարութեան պատիմը գըտաւ ։

Երան գաղաթը շատ մեծ քար մի կար  
Որուն տակն ու վրան գառնուկ կը խաղար,  
Եւ ահա մի ոսն նորա տակ մընաց,  
Աւ քան տեղէն կուրեցաւ գնաց :

27. Հայերէն տառերը հետեւալ կար-  
գառ կը դրու ին և կը կարդացու ին՝ այբ, բեն,  
զիմ, զա, եչ, զա, է, բժմ, ժմայ, ժէ, ինի, լիւն,  
խէ, ձա, կըն, հոյ, ձա, զադ, ձէ, մէն, յինու,  
շա, ոյ, չա, պէ, ջէ, ոտ, ոէ, վեց, ախւն, րէ, ցօ,  
ւիւն, փիւր, քէ, օ, ֆէ. \*)

28. Բոլոր ասուերն ի միասին՝ կը կազ-  
մեն հայերէն աբեբաւ, իսկ վերադրեալ կար-  
գը կը կաշուի աբեբաւ կարդ : Հայերէն այ-  
բարենի ասուերը 38 են :

ՏԱՐԻ ԳԱՐԵՎԱՆԱԿԱԹԻՒԽԻ

29. Հայերէն այբու բենի մէջ՝ տառը ե-  
րեք պաշտօն կը կոտարէ, առաջին՝ բազա-  
ձային տառի պէս կը կարդացու ի՝ զորօրինակ  
[յարկ—հարկ]. Երելրորդ կիսաձային է տառի

\*) Հետ չ տառերը վերջին ժամանակներն են մտած հայերէն ալբուբենի մէջ. օ-ի փոխանակ՝ առաջ կը գոր-  
ծածուէր ։ իսկ չ այժմ այ չատ քիչ զործածոթիւն  
ունի մեր մէջ. Քուով կը զրուին միմիայն օտարազգի բա-  
ռերը :

սղես կը հնչուի (զ.օր. եղբայր—եղբաիր) և  
երրորդ՝ բոլորովին համբ կը մնայ. (զ.օր.  
քահանայ—քահանա) :

30. Բառի սկիզբը, տառը փափուկ է : ի  
սղես կը կարդացուի . , ով սկսուած բառե-  
րը մեծ մասամբ առանց, տառի եւս կը  
պահպանեն իրենց նշանակութիւնը, քիչ  
շատ համեմալի կը լինին . զ.օր. յետոյ—ե-  
տոյ, յառաջ—առաջ . Յիսուս—խոտոս . յի-  
սուն—իմսուն :

42. Հետեւեալ խօսքերու մէջ գտէք յ-ով սկսուած  
բառերը և տակը զիծ քաշեցէք : — Յիսուս՝ յամառ  
և յանդուգն մանուկները չսիրեր + Յակոր յանդի-  
մանեց մի յիմար տղայ + Յուսիկ յարձակեցաւ Յով-  
սէփի վրայ և յափշտակեց նորա ձեռքէն յասմիկը :  
Յուգան սպաննեց մի յովազ + Յարէթը յամրաքայլ  
գետին եղերքը կ'զրօսնուր կատուն աչքերը յառած  
յատակին կը նայէր և կ'ուզէր նորա ներքեւ բոյն  
դրած մուկը յաջողութեամբ բռնել, Յարութիւնը  
յարատեւ կ'աշխատի և ամենքը կը յարդեն զինքը : Ես  
տեսած եմ յակինթ և յախճապակ : Յանկարծ յար-  
դի տակէն գուրս սողաց օձ մը, գիւղացին անյապաղ  
սպաննեց զայն : Ուստիցին յայտնեց յանցաւոր ա-  
շակերտներուն, որ ինքը յատկապէս կը նեղուի ա-  
նոնցմէ՝ որոնք իրենց ծուլութեանը չեն յաղթեր և  
յաջողութեամբ չեն պատրաստեր յաջորդ օրերուն  
դասերը : Իմ գիրքս ունի յաւելուած և յաւաջա-  
րան : Չեր յարկի ներքեւ յարդարեցէք ձեզ համար

յարմար բնակարան։ Յանախ Յովհաննես չէր կարող կշտանալ իրենց պարտեզի յաւէրժական գեղեցկութենէն։ Յուսիկ յանձնեց Յովսէփին և Յովակիմին իւր քրոջ՝ յուրանքները, որոնք գեղեցիկ կերպով շարույրութեն։ Մենք յախեան չենք կարող աշխատիլ մեր ձնողաց երախտազէտ լինելու պարտականութենէն։

ՀՅ. շոյ սկսած բառերու տակը դիմ քաշեցէք։ — Մերունին յենած իւր ցուպին՝ դէպի ի գետը կը նացէր, որոյ յասակ ջուրը յեղյեղուկ այիքներով կը հոսէր իւր մօտէն։ Ճերունին կը յիշէր իւր մանկութիւնը և կը յորդորէր իւր թոռները որ իրենց յոյոր ուրիշներու վրայ չդնեն։ Մանուկները միշտ յօժարութեամբ ականջ կը գնէին անոր յորդորներուն և յիրաւի կը կատարէին անոր խօսքը։ Յունիս և Յուլիս ամիսներու մէջ մարդիկ տաքին սաստկութենէն շուտ կը յոդնին։ Յոպոպը՝ յունապի ծառին վրայ յուշարարի պէս շարունակ կը կանչէր։ Յոյնը յղկեց պողպատէթիթեզը և յղեց իւր բնկերոջը։ Մոյլերը թէ դատէն առաջ և թէ դատէն յետոյ շարունակ կը յօրանջէին։ Հայրա շնեց մի գեղեցիկ յոպնակ—սայլակ։ Առիւծը յօշոտեց մի ոչխար։ Յիշոյ տալը անխացել և պախարակեցի բանէ է։ Յոդնակիթ թիւ Յորելեան տարին Մատաց յեղափոխութիւն։ Զորքը յուղել։ Մատերու յօդերը համրել։ — Ոչ ոք չըսեր թէ աչքիդ վրայ յօնք կայ։ Ել չխօսեց Արաքսը, յորձանք տուաւ ահազին, Օզակ-օզակ օձի պէս յառաջ սոզաց մոյեգին։

ԿԿ. Վերոյիշեալ երկու վարժութեանց մէջ հանդիպած բոլոր շոյ սկսած բառերը պարբենական

կարդով զատեցէք և ձեզ համար աղիւսակ կազմեցէք . Աշխարհաբարի մէջ այդ բառերէ զատ , — ով սկսուող ուրիշ բառեր հազիւթէ կը պատահին :

31. Բառի մեջտեղերը , տառը կցուելով - և . Ճայնաւորներուն՝ որպէս կիսաճայն չ կը կարդացուի , և այդ Ճայնաւորներուն հետ մի հնչիւն կը կազմե որ կը կոչուի ԵՐԵՎԵՐԻ . (այ , ոյ) :

Երկրարբառը տողագարծի ժամանակ մի տառ կը համարուի և չի բաժնուիր :

45. Հետեւեալ բառերը վանկերու բաժնեցէք և գտէք անոնց մէջ յով կազմուած երկրարբառը : Հայր , հայրենի , այս , այսօր , այժմ , այծ , այդ , այդի , այշրի , այդ , այլակերպ , բայց , դայլ , դայլայլիկ , Զարմայր , զայրանալ , ժայռ , եղբայր , հայրենասէր :

Գոյութիւն , գոյական , ախոյեան , հոյակապ , նոյաշէն , շոյել :

Լոյս , յոյս , յոյն , բոյս , բոյն , կոյս , գոյն , թոյն , ոյժ , գոյժ , աշխայժ , ժամացոյց , համբոյր , Պարոյր , հօրաքոյր , թակոյկ , երեկոյթ , հացկերոյթ :

32. Բառերու վերջերը - և . Ճայնաւորները երբեք միայնակ չեն մնար , այլ միշտ վերջաւորութիւնը կ'առնուն :

33. Միավանկ բառերու վերջը , տառը կը կարդացուի որպէս կէս : իսկ բազմավանկ բառերու վերջը համբ կը մնայ , — չի կարդացուիր :

ԱՅ . Հետեւեալ խօսքերուն մէջէն զատեցէք ու ուկցող միավանկ և բազմավանկ բառերը :

Ես աեսայ մէկ հայ : Յայշաննեաը թէյ կը խմեր : Թէյն կըսէն չայ : Նոյ աներ երեք որդի : Ճայ թրաշանիր ճահճացին աեղեր կը սիրէ : Այնովէս ընենք որ գերջէն զլիւուս վայ չ'ասնք : Հայրս դնեց մի կաթապ : Ես աեսայ մէկ քահանայ : Այս երեկոյ ես սփառի երթամ եկեղեցի : յետոյ տուն կուգամ և գասերս կը սերեմ : Ամառաւան տաք օրերուն տզաց մի նրանձ էր մի ծառի տակ. ես աեսայ զինքը, մօռեցաց և քայլ նառեցաց :

Այսօրուան զործդ վաղուան մի՛ ձգեր :

ՅԿ . Գործողութիւն ցուցնող միավանկ բառերու վերջը եւս , տառը համբ կը մնայ :

ԿԴ . Վարժապետը տառմնարան կու գայ և մեղի զաս կուտայ : Պայտասկիս մէջ զիրք և տեղաբակներ կան : Անորէնը քախ կը կենաց : Երբ երախան լայ , մայրս անոր ծիծ կու տայ :

ՅՅ . Յասուկ անուններու վերջը, զործողութիւն հրամացական ձեւ ով զրուած ժամանակի և -- , ու , ու , ու , ու , բառերուն վերջը , տառը չի զրուիր, այլ կը վերցայի :

ԿՅ . Գնա՞ և ըսէ՛ ընկերիս , որ իմ քախ զայ : Գու կարդա՞ զատ և նա կը ըսէ . յետոյ նա կը կարդայ և զու կը ըսս : Բահճանան եկեղեցւոյ մէջ կը սէ . սկեցո՞ , Տէր , զժողովուրդս քո և օրհնեա՛ զժառանդութիւնս քո՞ : — «Խնարճէցո՞ , ապրեցո՞ » :

Քու եզրօրդ անունը Եղիա է։ Նորա քրոջ անունը Աննա է։ Իմ անունն Արա է։ Քրտջս անունը Ալբանիա է։ Մօրս անունը Սոնա է։ Ֆրանսա, Խոալիա, Գերմանիա, Անգլիա և Ռուսիա՝ աշխարհներու առնուններ են։

49. Դրեցէ՞ք ձեր կողմանէ յ տառ ունեցազ բառ-  
ուեր ձեր սովորած կանոններուն հասնածացն։ Ամեն մի  
կանոնի վրաց հինգ բառ գրեցէ՞ք, միացն թէ այն  
կարգով, ինչ կարգով որ այս աեղ գասառորուած են  
կանոնները։

#### Հ և ՏՈՒԵՐՈՒ ԳՈՐԾԱԼՈՒԹԵՒՆՅ

36. Հայերէն այրուքենի մէջ և Հեշիոնը  
երկու նշանազիր ունի չ հ - ։

ա. Բառի սկիզբը - չ'զրուիր, իսկ բառի  
վերջը - չ - ։

բ. - ձայնաւորէն առաջ և չ'զրուիր թէ ե-ի  
կը բառի, իսկ - էն եաբը - չ'զրուիր իւր իս-  
կական Հեշմամբ այլ միշտ չ - ։

գ. - միշտ կը զործածուի ձայնաւորէն  
եաբը, իսկ չ միայն ձայնաւորէն առաջ - ։

դ. Բարդաւ թէ եանց մէջ ձայնաւորէն  
եաբը և կարելի է զնել - ։

50. Հ հնչիւնը բառի սկիզբը և վերջը - Վարդ,  
Հառ, Վար, ցառ, Վաղ, կառ, վեղար, վերեւ, Համ-  
բառ, Վարսակ, Վասակ, Վաղարշ, Վարդան, բարեւ,

արեւ, անձքեւ, տերեւ, վահան, վանք, վուշ, կոխ, անիւ, աղջիւ, թիւ, եկաւ, տեսաւ, կերաւ, տարաւ, բերաւ :

51. չ հեշինը . էն առաջ և յետոյր — Ասկի, որդի, ոյին, Ասկան, ոգի, ոլոր, ոլորակ, ողը, ոզն, ողիրյզ, ողնաշար, ողորկ, ողողել, ողորմելի, որչ, ողունել, ոճ, ոշխար, ոսպ, ոսկը, ոսոխն, ոստ, ոստայն, ոստան, ոստոտել, ոտք, ոտանաւոր, որդանալ, որդ, որկոր, որկրամոլ, ործ, ործաքար, որմ, որոգայթ, որոնող, որոնել, որոշել, որս :

Կով, սով, հով, ծով, բով, կոզով, կորով, ժողով, խօրոված, սովորել : Հայրո ձիով քաղաք գնաց և շուտով վերադարձաւ : Մովի վրայ նաւով կ'երթան, խակ ցամաքի վրայ՝ սայլով, կառքով, ձիով, էշով, ջորիով, երկամթուղիով : — Տեսնելով, ըսելով, ընելով, գնալով, գալով, տալով, մնալով :

52. Վերջին եօթը տողերու մէջ չով վերջացած բառերու չ տառը փոխեցէք — տառի և կարդացէք :

53. - Հեշինը ձայնաւորէ ետքը : — Աւազ, աւագ, աւազան, աւելի, աւետիս, աւետարան, Անուշաւան, բաւական, բաւարար, բեւեռ, գաւազան, գաւաթ, գաւառ, գաւանել, գաւակից, Դաւիթ, Եւս, Եւրոպա, զաւակ, թագաւոր, ժապաւէն, լաւանալ, խաւար, ծարսախիլ, ծաւաղել, հաւատ, հաւան, հեւալ, հիւանդ, հեւաւոր, ձաւար, Դեւոնդ, ծիւաղ, նաւակ, նաւարչ, սաւան, Աեւան, տաւար, տաւիդ, ցաւագար, տաւօտ, քաւող, փարաւոն :

54. Հետեւեալ բառերէն խրաքանչխորը երկու մասի բամնեցէք, միայն թէ այնպէս, որ ամէն մէկ մասը տատնձին նշանակոթիւն ունենայ : — Նաւավար

